





մանակ, հին ժամանակ, միջին ժամանակ եւ նորագոյն ժամանակ:

Գ. Մէնէվիշեանի «Հանքաբանութիւնում» կան պատմական չափազանց կարեւոր տեղեկութիւններ: Այսպէս, գրքի 26-րդ էջում, խօսելով հանքային ջրերի՝ ջերմուկների մասին, նշում է նաեւ Կարինի շրջանի Արծաթ գիւտը. «Անուանի են Բրուսայի ջերմուկները եւ Կարնոյի՝ Արծաթի եւ Ըլըջա (տճ.) ջերմուկներ: Այս ջերմուկները անուանի են՝ իբրեւ ծծմբային ջերմուկներ»: Խօսելով աղի հանքերի մասին՝ հեղինակը նշել է նաեւ Հայաստանի Կողբի յայտնի հանքավայրերը: (էջ 51): Տրուած են սողայի հանքավայրերը. «Քանի մը հանքային ջրերու մէջ, ինչպէս Բիլին եւ Կարլսբադ եւ Եգիպտոսի լճերու մէջ, կը գտնուի» (էջ 67): Աշխարհի խոշորագոյն նաւթահանքերից, որոնք յայտնի էին 19-րդ դարի վերջին, Գ. Մէնէվիշեանի գրքի 92-րդ էջում նշուած են հետեւեալ վայրեր՝ Բաքու, Պարսկաստան (Շիրազի քովերը), Պենսիլուանիա (ԱՄՆ), Լեհաստան, Անգլիա, Բիրմա, Կանադա, Գերմանիա, Ռուսիա, Պերու, Աւստրալիա, Ճապոնիա: Գրքի 90-րդ էջում տրուած է Բաքուում Ալ. Մանթաշեանցի նաւթագործարանի նկար-պատկերը:

Գաբրիէլ Մէնէվիշեանի բնագիտական աշխատութիւնների մասին խորհրդային Հայաստանում առաջինը անդրադարձել է Վախթանգ Անանեանը. «Անցեալներում Միխիթարեան միաբանութիւնը Վենետիկում եւ Վիեննայում հրատարակել է կենդանաբանական գրքեր: Դրանցից են, օրինակ, Հ. Սիմոն Երեմեանի «Նոր կենդանաբանութիւն եւ մարդակազմութիւն» աշխատութիւնը (Վենետիկ, 1896), Հ. Գաբրիէլ Մէնէվիշեանի «Կենդանաբանութիւնը» (Վիեննա, 897): Սակայն այդ աշխատութիւնները տառապում են մի

ընդհանուր պակասութեամբ: Կազմուած են եւրոպական դասագրքերի եւ հանրագիտարանների հիման վրայ, ուստի եւ հայրենի բնաշխարհի կենդանիները իրենց ուրոյն «դէմքով» նրանց մէջ կա՛մ տեղ չեն գտել, կա՛մ ներկայացուել են յաճախ աղաւաղուած»<sup>12</sup>:

Մեզ համար անընդունելի է Վ. Անանեանի արտայայտած կարծիքը: Ծճարիտ է, որ Միխիթարեանների եւ մասնաւորապէս՝ Գ. Մէնէվիշեանի լոյս ընծայած բնագիտական աշխատութիւններում համարեայ տեղ չեն գտել Հայաստանի կենդանական աշխարհի տեսակները: Բայց չէ՞ որ Գ. Մէնէվիշեանի դասագրքի վերնագիրը «Կենդանաբանութիւն» է: Նման աշխատութեան հեղինակը, մեր կարծիքով, պարտաւոր չէր բերել Հայաստանի կենդանական աշխարհից օրինակներ: Այլ խնդիր է Ղ. Ալիշանի հանրայայտ «Հայ բուսակը», քանի որ վերնագիրն արդէն խօսում է քննարկուող նիւթի մասին:

Վ. Անանեանի յիշեալ աշխատութեան լոյս տեսնելուց երկու տարի անց Գ. Մէնէվիշեանի, «Կենդանաբանութիւն» գրքին է անդրադարձել բնագէտ եւ մանկավարժ Ռուբէն Գաբրիէլեանը. «Եթէ դարուինիզմի տեսանկիւնով մօտենանք Վիեննայի Միխիթարեան Մէնէվիշեանի՝ կենդանաբանութեան կամ բուսաբանութեան դասագրքերին, մենք չենք նկատի բերողգիական համաշխարհային ուսմունքի ոչ մի ազդեցութիւն: Կենդանիները նկարագրուած են արտաքուստ: Մէնէվիշեանի դասագիրքը հրատարակուել է 1897 թուականին՝ մի տարեթիւ, երբ Դարուինի ուսմունքի ազդեցութիւնն արդէն նկատելի էր կենդանաբանութեան վրայ, երբ բազմաթիւ կենդանաբաններ արդէն մօտենում էին բիոլոգիական, կենդանաբանական խնդիրներին՝ դարուինիզմի տեսանկիւնից»<sup>13</sup>:

Ռ. Գաբրիէլեանի նշուած մենագրութիւնը գրուած է 1950-ականների վերջերին, երբ խորհրդային Հայաստանում շուրջով էինք խօսում Միխիթարեան միաբանութեան գործունէութեան մասին: Ի պատիւ Ռ. Գաբրիէլեանի հպարտութեամբ պէտք է նախ նշենք, որ նա համարձակութիւն է ունեցել սեւով սպիտակի վրայ գրել, որ կրօնական գործիչ Գ. Մէնէվիշեանը բնագիտական աշխատութիւնների հեղինակ է: Հիմա խօսենք այն դիտողութիւնների մասին, որը ուղղուած է Գ. Մէնէվիշեանին: Ամենայն հաւանականութեամբ Ռ. Գաբրիէլեանը չի կարողացել Գ. Մէնէվիշեանի «Հանքաբանութիւնը» որը աւարտուում է հետեւեալ տողերով. «Երկրիս բնական զարգացումը՝ զազային մարմնէ մը, ըստ Կանտի եւ Լապլասի դրութեան, այսպիսի հաստատուն ձեւ առնուլը կը լուսաբանէ ստեղծագործութեան հրաշալիքը. եւ այսօրուան գիտութիւնը՝ իւր քննութիւններով կ'ապացուցանէ Մովսէսին այն խօսքը, որով թէ առաջին նիւթին (Urstoff) եւ թէ՛ առաջին զօրութեան (Urkraft) ստեղծուելը եւ թէ՛ այս երկուքին միաբան գործունէութենէ յառաջ եկած տեսանելի աշխարհին կազմութիւնը կը մեկնուի»<sup>14</sup>:

Գաբրիէլ Մէնէվիշեանը լեզուաբան է, ազգագրագէտ եւ նաեւ բնագիտական երկերի հեղինակ: Գ. Մէնէվիշեանի նպատակը ամենեւին էլ բնագիտական նոր երեւոյթների յայտնագործումը չի եղել: Նրա նպատակը շատ պարզ է՝ բնագիտական գիտելիքները հայ ուսանողին հրամցնել՝ գիտական բարձր մակարդակ հասնելու դասագրքերով. «Յուսանք եւ ապահովող դասագրքերով. թէ դասագիրքս այս էր մեր նպատակը՝ թէ դասագիրքս իւր երեք հատորներովը՝ իբր ամբողջ մը՝

պիտի նպաստէ բնական պատմութեան ծանօթութեանց զարգացման մեր ազգային դպրոցներու մէջ»<sup>15</sup>:

Նշելի է նաեւ, որ Հայաստանում՝ բուսաբանութեանը, կենդանաբանութեանը եւ հանքաբանութեանը առանձին նուիրուած մենագրութիւններ կամ դասագրքեր, ընդհուպ մինչեւ 1930-ական թուականները չեն հրատարակուել:

Գ. Մէնէվիշեանի՝ «Հանքաբանութիւն» դասագրքի մասին Հայաստանում առաջին անգամ մանրամասնօրէն խօսուել է մեր մենագրութեան էջերում՝ Գաբրիէլ Մէնէվիշեանի «Հանքաբանութիւնը» վերնագրով<sup>16</sup>:

Գ. Մէնէվիշեանի նշուած երեք հատորները՝ «Բուսաբանութիւնը», անգնահատելի գանձ են մեր բազմադարեան հայ բնագիտութեան պատմութեան գանձարանում: Այսօր էլ դրանք ընթերցուում են մեծ հետաքրքրութեամբ: Հայաստանում գրուած եւ գրուելիք նմանատիպ դասագրքերի հեղինակները այդ գրքերից կարող են քաղել չափազանց արժէքաւոր տեղեկութիւններ: Մեր այս սեղմ յօդուածը ուզում ենք աւարտել հեղինակի հրածր ուզում ենք աւարտել «Հանքաբանութեան» շալի խօսքերով՝ «Յուսանք, որ այս դասագիրքս գործածողը պիտի տեսնէ, թէ ինչ գանձեր կան այս երկրին տակը, զոր ոտնակոխ կ'ընենք ամէն օր եւ թէ ինչպէս օգտակարապէս կրնանք գործածել այն նիւթերը՝ զորոնք միայն «յորդորախոյզ աշխարհ» ըլլալով կրնանք վայելել, եթէ ոչ ամբողջ պեղելով, գոնէ անոնց նկատմամբ եղած գիտնական ծանօթութիւնները ստանալով. եւ զայս կը սորվեցնէ՛ ահա մեր այս համառօտ դասագիրքը»...

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ  
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԺԵ-ԺԷ ԴԱՐԵՐՈՒՄ  
(Երկու հնատիպ վաւերագրի քննութիւն)

Արմէն Այվազեան

Ա Մ Ա Ս

Լեւոն Մինասեանը նկարագրել է Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիւանում պահուող երկու վաւերագիր (ըստ հեղինակի՝ Կոնդակ), որոնք 1693 թ. տպագրուել էին Նոր Զուղայի տպարանում՝ երկու հարիւր օրինակով, մէկական էջի վրայ, մէկի չափերը 80x28 սմ, միւսինը՝ 44x35 սմ: Նկարագրութեան մէջ ասուած էր, թէ «երկու կոնդակի բովանդակութիւնն էլ բողոք ու հանրաստորագրութիւն է կաթողիկոսական ընտրութեան շուրջ»: Նշուած էր երկրորդ վաւերագրի խորագիրը՝ «Յաղագս կարգի կաթողիկոս ձեռնագրութեան, գրեալ ի Մովսիսէ վարդապետէ Բջնեցոյ. համաձայնութեամբ սրբազան վարդապետաց եւ եպիսկոպոսաց», նշուած էր նաեւ, որ այն ստորագրել են 27 հոգի՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, խոջաներ եւ ուրիշներ (անունները չէին յիշատակուած)<sup>1</sup>: Այս տեղեկութիւնները, բնականաբար, վաւերագրերի մասին առարկայական պատկերացում կազմելու համար բաւարար չէին:

Վաւերագրերը, առանց հական նորութեան, նկարագրուել են նաեւ Երեւանում լոյս տեսած՝ 1512-1800 թթ. հայ տպագիր գրքի կոթողային մատենագրութեան մէջ<sup>2</sup>:

Այդ վաւերագրերի ներկայ՝ ստորեւ տրուող գիտական հրատարակութիւնը պատրաստել ենք Հայաստանի Ազգային գրադարանում պահուող լուսապատճէնների հիման վրայ:

Սկզբից եւեթ նշենք վաւերագրերը նկարագրած հեղինակների ուշադրութիւնից վրիպած կարեւոր երեք փաստ.

Ա. Թէեւ երկու փաստաթուղթն էլ տպագրուել են միաժամանակ՝ 1693 թ. մայիսի 1-ին, դրանցից մէկը գրուել էր 28 տարի առաջ՝ 1665 թ.: Հետեւաբար, որքան էլ այս վաւերագրերը փոխկապակցուած են թէ՛ միասին տպագրուած լինելու, թէ՛ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան կանոնակարգին վերաբերելու առումով, դրանով հանդերձ, նրանցից իւրաքանչիւրը պահանջում է առանձին մօտեցում եւ քննութիւն:

Բ. Այս վաւերագրերը (ինչպէս կոչել են նկարագրողները) կոնդակ, այսինքն՝ հայրապետական կամ առաջնորդական ուղերձներ չեն, այլ մէկը 1665 թ. Արեւելահայաստանի մի խումբ երեւելի հոգեւոր եւ աշխարհիկ գործիչների գումարած ժողովի որոշումն է, իսկ միւսը՝ 1693 թ. ջուղահայութեան անունից Արեւելահայաստանի հոգեւոր կենտրոններին առաքուած շրջաբերականը:

Գ. Յ. Տէր-Յովհաննեսը դեռեւս 1881 թ. ամբողջութեամբ հրապարակել է 1693 թ. շարագրուած շրջաբերականը, առանց որեւէ քննութեան՝ «յաղագս լինելոյ ազգային հնութեան, թէպէտ արտաքոյ կարգի պատմութեանս է գործ»<sup>3</sup>: Սակայն, այս արժէքաւոր վաւերագիրը հետագայում մատնուել է անուշադրութեան ու որեւէ քննութեան չի արժանացել<sup>4</sup>: Այդ իսկ պատճառով, կրկին վերահրատարակելով այն, սողատակում նշանակում ենք Տէր-Յովհաննեսի շեղումներն ու

Գարիէլ Մէլեւիշեանի «Հանքաբանութիւն» գրքից երեք պատկեր

